

**Մարզպետի տեղակալ Կարեն Ադամյանը մասնակցեց Վարագա Սուրբ Խաչի տոնին  
28.09.2014**

Սեպտեմբերի 28-ին մարզպետի տեղակալ Կարեն Ադամյանը Բերդի տարածաշրջանում գտնվող Նոր Վարագավանքում մասնակցեց Վարագա Սուրբ Խաչի տոնին: Այդ օրը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից մեծ հանդիսությամբ Վարագավան գյուղից մոտ 2 կմ հարավ-արևմուտք գտնվող Նոր Վարագավանքի վանքային համալիր տեղափոխվեց Քրիստոսի խաչափայտի մասունքը՝ հավատավոր ժողովրդի երկրպագության համար: Վարագավանքում մատուցվեց նաև Պատարագ Մովսես գյուղի քահանա Տեր Աբելի ձեռամբ: